

ՊԱՏԱԿԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՂՇՈՒՄՆԵՐԸ Կ. ՊՈԼՍԻ ՊԱՏՐԻԱՐԺՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ամուսնությունը արդամարդու և կնոջ միջև կնքված համապեղ կենցաղավարության մի դաշինք է, որը խաբսխված է հոգևոր և ֆիզիկական ընդհանրությամբ: Ինչքան էլ, որ ամուսնությունը իրենից քաղաքացիական ակտ ներկայացնի, այնուամենայնիվ այն կապված է հոգևոր սրբազան արարողություններով, քանի որ ամուսնությունը աստվածադիր է: Դրա առաջին օրինակին մենք հանդիպում ենք դեռևս մարդու արարման ժամանակ: Այսինքն՝ երբ Աստված փրկեց, որ անհնարին է մարդուն մենակ ապրել, Նա Ադամի կողքից սքեղծեց Եվային, հանուն որի մարդը պետք է թողնի իր հորն ու մորը, գնա իր կնոջ երեկոց, և երկուսով լինեն մեկ մարմին¹:

Այս թեմայի եկեղեցական կանոնակարգի մասին է խոսում Մաղաքիա արք. Օրմանյանը, որն իր 1901թ. Կ. Պոլսում հրապարակած 14 հոդվածից բաղկացած կոնդակում կանոնակարգել է ամուսնության ձևի ժամանակ կատարվող ծիսական բոլոր արարողությունները՝ նշանադրությունից մինչև թագվերաց:

Ղապելով կոնդակի սկզբում շարադրված նախաբանից՝ կարելի է եզրակացնել, որ այն հրապարակվել է նպատակ ունենալով կասեցնել քահանաների այն օրինազանցությունները, որ դրսևորվել են եկեղեցու խորանից դուրս՝ պսակի օրհնության և ամուսնական այլ ձևերի ժամանակ: Այսպես օրինակ՝ Մաղաքիա արք. Օրմանյանը, մեջբերելով Մաշտոցում ամրագրված այն օրենքը, ըստ որի «Պսակի օրհնությունը պիտի կատարուի ի մեջ Եկեղեցույ, առաջի Սրբոյ Խորանին և ի ժամ մարուցման Ս. Պատարագի, որ այդ առթիւ յապուկ սրբաբանություններ և երգեր և ընթերցումներ կունենայ, փոխանակ առաջ փոսական պատշաճին», արգելում է փնրում, ժամանցի սրահներում պսակ օրհնել և ծիսական սպասք օգտագործել, հոգևոր պաշտամունք կատարել: Ավելին, նա, մեջբերելով 1875 թ. ապրիլ 25-ին Խառն Ժողովով հաստատված հարսանեկան կանոնագրի ԺԷ հոդվածը, վեց ամսից մինչև մեկ փարով քահանայագործությունից զրկում է սպառնում առանց պարիարքարանի հատուկ և գրավոր հրամանի փան մեջ պսակ օրհնող քահանաներին: :

Բացի կոնդակը հոգված առ հոգված վերլուծելուց, կփորձենք նաև որոշ գուգահեռներ անցկացնել մեր ձեռքի փակ եղած նյութերի հետ՝ պարզելու համար, թե կոնդակի հրապարակումից հետո այն ինչպիսի ազդեցություն է ունեցել փվյալ ժամանակահատվածում ամուսնական ծիսակատարությունների վրա:

Նամաձայն կոնդակի Ա հոդվածի՝ ծխապեր քահանաներին արգելվում է նշան օրհնել և «Պահպանեայ»-ով հաստատել երկու կողմերի միջև հաստատված խոսքկապը: Օրինական նշանադրություն համարվում է այն նշանադրությունը, որը հաստատվում, արձանագրվում և օրհնվում է պարիարքարանում: Ընդհանրական շրջանակում կատարված խոսքկապը երբեք օրինական ուժ չունի: Իսկ Բ հոդվածով պարիարքը դիմում է երկու կողմի ծնողներին, որպեսզի նրանք ընդհանրական խոսքկապով չսահմանափակվեն, այլ ամեն բան ճշտելուց հետո պաշտոնական նշանադրությունը կատարեն պարիարքարանում:

1 Նմմր. Ծննդոց Բ 22-24, Եր., 1997:

Ա. Այսպոյաճյանը, խոսելով Եդոնիայի և շրջակայքի հայության ամուսնաբանական ծխաշաքի մասին, նշանի օրհնության հետ կապված ասում է հետևյալը. «Նշանի օրհնութիւնը աղջկան փան մէջ փեղի կ'ունենար: Քահանան է, որ հարսանցուն և փեսացուն ձեռքը կը դնէր նշանին մաքանինը»³: Նույն հեղինակը, խոսելով Կեսարիայի շրջակայքի հայության ամուսնաբանական ծխաշաքի մասին, նշում է. «Խօսքկապից հետո հետևեալ օրը քաներէց քահանան կ'երթայ թէ՛ փղուն և թէ՛ աղջկան վրայ պաշտօնական «Պահպանիչ» կ'արքասանէ: Երկու շաբաթ յետոյ կը դրկուի բուն իսկ պաշտօնական նշանը՝ դարձեալ քահանային ձեռքով»⁴: Եթե Կ. Պոլսի պարբերաբար իր կոնդակով խտրով արգելում է նշանի՝ քաներ օրհնելու կարգը և այդ առթիվ մեջբերում դնում 1875 թ. Խառը ժողովի կանոնագիրը, ապա Ակնում փեղի ունեցող խոսքկապի ժամանակ քահանան իր գործողությունը նույնիսկ «հայրապետի կանոնով» է հաստատում. «Աղջկա ձեռքը պաշտօնապես խնդրելու ժամանակ աղջկա փուն էին ուղղվում **ճիճաչիները**՝ այսինքն խնդրարկուները, որոնց առաջնորդը սովորաբար հեղինակավոր մեկն էր լինում: Օրինակ Ակնում այդ դերը ստանձնել է փաներէց քահանան, որը խոսք առնելով ասում էր. «Եկած ենք Աստուծո հրամանով, հայրապետի կանոնով, ձեր աղջկան ձեռքը խնդրելու մեր (օրինակ՝ Աճեմնեց Կիրակոս աղայի) փղին»⁵: Իսկ շարունակության մեջ ասվում է. «Խոսքկապը որպէսզի պաշտօնական փեսք ստանար, կարգն այնպէս էր պահանջում, որ մի օր հետո քաներէց քահանան նոր խնամիների փները գնալով, աղջկա և փղայի գլխին ավանդական «պահպանիչը» պէտք է կարդար»⁶: Խոսքկապի օրհնության նույն կարգը փեղի է ունեցել նաև Ադձնիքում, որի մասին իշխարակել է Ռ. Նահապետյանն իր աշխատության մեջ. «Տղայի հարագարները նախապէս լուր էին ուղարկում աղջկա ծնողներին և քահանայի ուղեկցությամբ, կիրակի երեկոյան գնում էին աղջկա փուն խնամախոսության»⁷: Իսկ նշանի օրհնության մասին նույն փեղում կարդում ենք հետևյալը. «Տղայի կողմից նշանդրեքին մասնակցում էին հայրը, քովորը, քովորկինը, քեռին ..., նաև գյուղի ռեսն ու քահանան, որոնց ներկայությունն այս հանդեսին պարտադիր էր Նայաստանի գրեթե բոլոր վայրերում»⁸: Այսպէս հեղինակում ենք նշանադրության ժամանակ քահանայի ոչ միայն օրհնությամբ մասնակցությանը, այլ. «Նշանդրեքին հրավիրված քահանան օրհնում էր բերված նվերները և հերթով հագցնում հարսնացունին»⁹:

Դարելով վերը շարադրված նյութերից՝ կարելի է եզրակացնել, որ նշանի փունը քահանայի անմիջական և պարտադիր մասնակցությունը այնքան ամուր և խոր արմատներ ունի, որ նույնիսկ պարբերաբար կոնդակը ի գործ չի եղել այդ երևույթը վերացնելու: Մի գուցե այն ինչ-ինչ վայրերում կարողացել է որոշակի ազդեցություն ունենալ, սակայն ոչ ամբողջությամբ. «Խոսքկապի հաջորդ օրը երկու կողմերից մի-մի հոգի գնում է Առաջնորդա-

2 Այսօր Նայաստանի եկեղեցիներում հարսն ու փեսան են միմյանց մաքանիներ հագցնում, և ոչ թե քահանան:

3 **Արշակ Այսոյաճեան**, Պարմութիւն Եվդոկիոյ Նայոց, Կահիրէ, 1952, էջ 1503:

4 **Արշակ Այսոյաճեան**, Պարմութիւն Նայ Կեսարիոյ, Կ. Բ., Կահիրէ, 1937, էջ 1723:

5 **Վ. Ս. Թեմուրճյան**, Նայ ազգագրություն և բանահյուսություն, Գամիրքի հայերը, հայտն Ա, Եր., 1970, էջ 115:

6 Տե՛ս անդ, էջ 116:

7 **Ռաֆիկ Նահապետյան**, Ադձնիքահայերի ամուսնադարձական սովորություններն ու ծեսերը, Եր., 2007, էջ 67:

8 Տե՛ս անդ, էջ 77:

9 Տե՛ս անդ, էջ 80:

րան, որին դիմելուց հետո մի հրամանագիր են ստանում (այս հրամանագրի սովորությունն ութ քաղաքներ է լինում միայն հաստատված է), որով քանակական քանակական գումար է թե քաղաքի, եւ թե աղջկա տուն՝ նրանց վրա պաշտոնական «Պահպանիչ»-ը կարգադրու: Պաշտոնական «Պահպանիչ»-ից երկու շաբաթ կամ մինչև երկու ամիս հետո դարձյալ քանակական ձեռքով ուղարկվում է պաշտոնական նշանը»¹⁰:

Այսպիսով, նշանադրությունը քանակական մասնակցությունը գալիս է դեռ վաղ ավարտական ժամանակներից, որի ժամանակ Հայաստանում նշանադրության համար ընդունված էր բանավոր ձևը: Այդ ժամանակաշրջանում նշանադրության ձևը կարգադրում էր քանակական՝ նշանադրվող հարսնացուի քանակական մասնակցությամբ՝ իր ներկայությամբ օրինական քանակական քանակական նշանադրության ձևին¹¹:

Կոնդակի Գ հոդվածով հորդորվում է նշանադրությունից մինչև պսակադրություն ժամանակահատվածը քաղաքային չեղարկվել՝ անպեղծի միջադեպերից եւ ծախսերից խուսափելու համար: Եվ այդ առիթով նպատակահարմար էր համարվում նշանադրությունից պսակադրություն մինչև վեց ամիս սպասելը:

Նշանադրությունից պսակադրություն սահմանված վեցամսյա ժամանակահատվածը եւս ժողովրդի մեջ հաստատվում էր համարվել, քանի որ հարսանիքին պարտադր լինելը քաղաքի ընդհանրիկ համար կախված էր նյութապես պարտադր լինելուց, իսկ աղջկա ընդհանրիկ համար՝ օժիպի պարտադր լինելուց. «Նշանադրության շրջանը բաժանվում էր երկու, մինչև մեկ քաղաքի կը քանակ, օժիպի պարտադրության համար»¹²: Պսակադրության ժամկետի հետաձգման պարտադր կարող էր դառնալ նաեւ մոտ ազգականի՝ եղբոր, քեռու կամ հորեղբոր աշխարհիկ պարտադր օրարության մեջ գրվելը, որը քաղաքի ժամանակներում հաճախ էին պարտադր:

Պարտադրական կոնդակի Դ հոդվածում խոսվում է ամուսնական ծխակապարտության առիթով պարտադրականին քաղաքի մասին: Ըստ կոնդակի՝ պարտադրականը հարսնացուի մի ցուցակ է կազմել եւ պահել պարտադրականի դիմանադրանը, համաձայն որի ամուսնացող երկու կողմերը քաղաքը պարտ է վճարելին ոչ թե իրենց ուզած չափով, այլ ըստ իրենց կարողության :

Կոնդակի Ե հոդվածը բարոյախրապական խմաստ ունի. քանակական եւ հարսնացուին ծխարար քանակական միջոցով բացառվում է ամուսնության բարոյական կողմը, եւ որ այն ընդունվի որպես բարեպաշտական եւ բարեգործական պարտ, այլ ոչ թե որպես արարաբան հաճոյական կամ շահադիպական գործողություն:

Ըստ Զ հոդվածի՝ պսակի օրինության համար ընդունված օրերն են պահոց եւ քանակական քանակական չափադրվող երկուշաբթի օրերը եւ նույն յոթնյակների երեքշաբթի, հինգշաբթի եւ շաբաթ օրերը:

Համաձայն ազգագրական գրականության՝ հայոց ընդհանրապես հարսնայաց արարողությունները հիմնականում քաղաքի եւ ունեցել ու աշխատել եւ ձմռանը, այսինքն՝ երբ

10 Բիւրակն, Ամուսնական սովորություններ Կեսարիոյ մէջ, 1900թ., Կ. Պոլիս, թիւ 23, էջ 346:

11 Ս. Ն. Նովիկովսկայն, Ամուսնա-ընդհանրական իրավունքը վաղ ավարտական Հայաստանում IV – IX դդ., Եր., 1976, էջ 133-134:

12 Արշակ Արայանեան, Պարտադրութիւն Երկրի Հայոց, Կահիրէ, 1952, էջ 1503:

ավարտվել են գյուղաբնակչության աշխատանքները, և շրեմարանները լցվել մթերքներով: Այդ իսկ պատճառով շարքերում պսակի օրհնության համար սահմանված հատուկ օրերը չեն պահպանվել: Օրինակ՝ «Կիրակի կես գիշերին վերջը երկու կողմերն ալ իրենց փողերն ճամբայ ելլելով եկեղեցի կ'երթան, իրենց հետ ունենալով հարս ու փեսան»¹³: Կեսաբիայի Նիրգե գյուղում քրեյի ունեցած հարսանեկան ծեսի նկարագրության մեջ հանդիպում ենք. «Կիրակի առաօրում երբ եկեղեցին մեջ պսակի արարողությունը լմնայ, փեսային կը հագցնեն եկեղեցիի ճերմակ շապիկ մը, ձեռքը սրարմաշէթ մոմ մը, կը կանգնի Տէրաբերին մօտ, բոլոր հանդիսականները առանց բացառության նոր փեսային թագը կը համբուրեն»¹⁴: Սակայն Եդուկիայում պսակի օրհնության համար սահմանված հատուկ օրերը պահպանվել են. «Պսակները կը կատարուէին ըստ եկեղեցական օրենսդրության որոշեալ օրեր»¹⁵:

Կոնդակի Է հոգվածը վերաբերում է հալավ օրհնության ծեսին, որը, ըստ պատրիարքի, բարեպաշտական արարողություն է: Հալավի օրհնությունը պետք է կատարի յուրաքանչյուր կողմի փան ծխարեր քահանան՝ պսակից մեկ օր առաջ: Հալավի օրհնությունը երբեք եկեղեցում կատարվելիք արարողություն չէ:

Եթե նախկինում հալավ օրհնության ծեսը որոշ վայրերում կատարվել է եկեղեցում¹⁶, ապա կոնդակի երասպարակումից հետո գրեթե ամենուր կատարվել է փանը՝ ծխարեր քահանայի կողմից. «Գիշերուան առաջին ժամերուն, ճայնառք քոյայք մոմեր ի ձեռն սենեակէն ներս կը մտնէին իրենց հետ ունենալով փեսին հագուստներն (վերաբերում է ֆէտը): Քահանայք զգեստաւորուելով հալաֆ կ'օրհնէին, ապա երգեցիկ մանկունք սենեակէն դուրս ելնելով, կ'երթային փեսան բերել շարականներով: Փեսան ուղղակի կ'երթայ համբուրել վարդապետին կամ քահանային ձեռքն, որն այս առթիւ կ'ըսէր պահպանիչ մը»¹⁷: Նույն կարգը հանդիպում ենք նաև Գամիթթում. «Գամիթթի հայերի մեջ ընդունված էր, որ փեսան լոզանքից հետո, իր ներքնահագուստը և էներթին հագած, առաջնորդվում էր այն սենյակը, ուր քահանան պետք է օրհնէր «թագավորական հալավը»: Քահանան օրհնում էր փեսայի սալթան (հերմանեն), գլխարկը և թավրի սուրբ, որոշ վայրերում նաև հարսի հալավը»¹⁸:

Այսպիսով, հարսանյաց հանդերձն օրհնելը քահանայի կանոնադրական պարտականությունն էր: Նա, վերցնելով խաչն ու «Մաշտոցը», գնում էր նախ փեսայի, ապա հարսի փողով հանդերձն օրհնելու: «Մաշտոց»-ում հալավ օրհնության է նվիրված հատուկ մի կանոն, որը հայերն է «Կանոն հանդերձն օրհնելու» վերաբերյալ¹⁹:

Պատրիարքական կոնդակի Ը հոգվածը վերաբերում է հարսնառի խմբի կողմից հարսին առանձին, իսկ փեսավեր խմբի կողմից փեսուն առանձին եկեղեցի փանելուն, եկեղեցու արարողությունը «Նայեաց ի մեզ» շարականով սկսելուն և եկեղեցում ձեռնադրության կար-

13 Արշակ Այաօյան, Պարմութիւն Նայ Կեսարիոյ, հ. Բ, Կահիրէ, 1937, էջ 1726:

14 Սենեքերիմ Խորրեան, Նամասթ Պարմ. Կեսարիոյ Նիրգէ գիւղի, էջ 17-18, ըստ Արշակ Այաօյանի, Պարմութիւն, Նայ Կեսարիոյ, հ. Բ, Կահիրէ, 1937, էջ 1728:

15 Արշակ Այաօյան, Պարմութիւն Եդուկիոյ Նայոց, Կահիրէ, 1952, էջ 1504:

16 Պսակի օրվա առավոտյան փեսայի քրեյը հարսի հալավներն ու մարանին ուղարկում է եկեղեցի՝ օրհնելու՝ քահանային ուղարկելով խաչած հավ, խմորեղեն, ձվածեղ, «խաչ - գաթա» և մի շրտալ գինի: (Տեն Ե. Լալայան, Ազգագրական հանդես, Նամշենցի հայեր, Դ գիրք, Թիֆլիս, 1898, թիվ 2, էջ 138):

17 Արշակ Այաօյան, Պարմութիւն Եվդոկիոյ Նայոց, Կահիրէ, 1952, էջ 1504:

18 Վ. Ս. Թեմուրճյան, նշվ. աշխ., էջ 120:

19 ՄՄ 953, էջ 197ա - 202բ:

գը խրապից ու խոստումներից հեպտ կապարեւում: Ինչ վերաբերում է նարաբին, ապա, ըստ կոնդակի, թույլաբերվում է, որ այն կապվի րեդական սովորության համաձայն:

Վերը նշված մնացած պահանջներն էլ են կապարվել ըստ րեդական եկեղեցիների հայեցողության: Եվդոկիայի պարմության մասին գրքում կարդում ենք. «Թափորը երբ եկեղեցի հասնէր, հարսը իր եղբոր ընկերակցութեամբ եկեղեցի կը մտնէր, ուր արդէն հրաւիրեալները հաւաքուած կ'ըլլային: Քահանաները եւ դպիրները «Ուրախ Լէր» շարականով խորան կ'առաջնորդէին հարսն ու փեսան, ուր կը կապարուէր պսակի արարողութիւնը, որուն ներկայ չէին գտնուիր հարսին ծնողքը»²⁰: Նարսի եւ փեսայի՝ առանձին խմբերով եկեղեցի գնալու կարգը եւս միանշանակ չի պահպանվել: Օրինակ՝ Էվերեկում եւ նրա շրջակա գյուղերում երկու կողմերը առանձին չեն գնում եկեղեցի, այլ փեսի կողմից հարսի փուն «հարսն առնել» են գնում, այնպէս չի միասին եկեղեցի²¹:

Նամաձայն Թ հոդվածի՝ թագվերացի արարողությունը կարիք չկա հին սովորությամբ երեք օր հեպտ կապարել, այլ թույլաբերվում է թագը վերցնել անմիջապես պսակից հեպտ:

Այսպէս հեպտաբերական է այն փաստը, որ եթե նախորդ արարողությունների դեպքերում ժողովուրդը միշտ փորձել է ծեսի ժամանակ կապարվող գործողությունները հեշտացնել եւ հարմարեցնել իրեն, ապա այս դեպքում, երբ եկեղեցին է ավելի դյուրին դարձրել թագը վերցնելու արարողությունը, ժողովուրդը չի շտապել հեպտել դրան: Ինչպէս րեսնում ենք բազմաթիվ ազգագրական նյութերում, հարսի ու փեսայի թագը մեկ օրից շուր, եթե ոչ ավելի ուշ, չի վերցվել: Օրինակ՝ «Նարսի որ ոսկի է փորը խաչով մը քահանան հարսին ու փեսին գլխուն կը կապէր, նոյն օրը չէր վերցուէր, այլ անոնք գայն կը կրէին մինչեւ յաջորդ օրը »²²: Նոյն առիթով Կեսարիայում հանդիպում ենք հեպտայալ փաստին. «Թ-Է՝ հարսին եւ թ-՝ փեսին ճակատը խաչ կը կապեն պսակի արեւն, որոնք կը մնան նրանց վրայ մինչեւ Երկուշաբթի»²³: Կամ. «Էվերեկի մէջ սովորութիւն է, որ Բշ. իրիկուան, երեկոյեան ժամերգութեան արեւն, փեսան կնքահօրը հեպտ եկեղեցի երթայ, որպէսզի խաչը հանուի գլխէն: Այս արարողութիւնը Էվերեկից կը կոչեն « ա՛ռ թագաւոր »: Եղած են պարագաներ որ կնքահայրը 3-4 օր խաչը գլուխը ձգել փուն է եւ այսպէս հարսնիքը շարունակուած՝ օրերով: Իսկ հարսին խաչը քահանան փուն կ'երթայ առնելու համար»²⁴: Գամիքում եւս թագվերացը նոյն օրը րեդի չի ունենում. «Առագաստից առաջ, երեկոյան րեդի էր ունենում նարաբի քանդումը: Տաներեց քահանան քավորի, քավորկնոջ, խաչեղբոր, հարսնեղբոր, քոյայի ծնողների եւ նրանց մոտակա բարեկամների ու ազգականների նեղ շրջանում, հարս ու փեսային գլուխ գլխի դնելով, օրհնում է նարաբը եւ ապա քանդում այն հանգույցը, որ կապել էր պսակի արարողութեան ժամանակ»²⁵:

Մոնդակի Ժ հոդվածը վերաբերում է պսակի օրհնության ժամանակ կնքահօր դերին, ըստ որի Մաղաթիա արք. Օրմանյանը գտնում է, որ կնքահօր փոխարեն պսակի ժամանակ Ս. Խաչը կարող էր խաչեղբայրը բռնել, բանի որ այս ծեսի ժամանակ կնիքի (դրոշմի) խնդիր

20 Արշակ Այսոյան, նշվ. աշխ., էջ 1508:

21 Արշակ Այսոյան, Պարմութիւն Նայ Կեսարիոյ, հ. Բ, էջ 1726:

22 Արշակ Այսոյան, նշվ. աշխ., էջ 1508:

23 Արշակ Այսոյան, Պարմութիւն Նայ Կեսարիոյ, հ. Բ, էջ 1728:

24 Անդ, էջ 1730:

25 Վ. Ս. Թ-նմութեան, նշվ. աշխ., էջ 126:

չկար: Նա գտնում է նաև, որ խաչեղբայրը պետք է լիներ փորձառու և պարասխանաբար մի մարդ, որ հովանավորի և խնամակալի դեր ստանձներ նորաստեղծ ընտանիքի և անփորձ երիտասարդների համար:

Նիմբ ընդունելով այն փաստը, որ փեսայի խաչեղբայրն ընտրվում էր մականների միջից ամենաճարպիկն ու հմուտը, երբեմն նաև քավորի կողմից կազմակերպված սակարկության ժամանակ հաղթողը՝ խաչեղբայր ընտրված երիտասարդը կարող էր չգիտակցել այդ դերի լքությունը: Պետք է նկատի ունենալ, որ եթե քղանդին այդ ժամանակաշրջանում վաղ փառիքում էին ամուսնացնում (16-18 մինչև 20 տարեկան), ապա նրա ընկերները ևս նույն փառիքում պետք է լինեին, ուստի չէին կարող փորձառու և պարասխանաբար լինել: Ինչ վերաբերում է պսակի օրհնության ժամանակ խաչեղբոր Ս. Խաչը բռնելուն, ապա մեր օգտագործած նյութերում հանդիպում ենք հետևյալին. «Եկեղեցու դասից պսակող քահանան հարս ու փեսին և փեսամանրիկին առաջնորդելով դասից ներս, հասցնում է սեղանի առաջ և այսպես հարս ու փեսին կանգնեցնում իրար դիմաց, գլուխգլխի և նարոպը կապելով նրանց գլուխներին, խորհրդավոր հանգույցն է անում: Իսկ փեսամանրիկը նրանց գլխին էր բռնում խաչը: Արարիկի շրջանում պսակի արարողության ժամանակ քավորը հարս ու փեսի գլխավերելում բռնում էր նաև մի կեռ սուր»^{26 27}:

Պսակի անվերապահորեն եկեղեցու մեջ օրհնելու կարգին հանդիպում ենք կոնդակի ԺԱ հոդվածում: Պարբիարքը հարկ է համարել նաև սույն հոդվածում խոսել նաև եկեղեցուն և եկեղեցական պաշտոնյաներին քրվող նվերների ոչ կարևորության, եկեղեցու հատուկ քանական լուսավառության ու զարդարանքի ոչ անհրաժեշտության և ինքնակ եկեղեցուն պսակին ներկա գտնվողների անհամապատասխան հագուստների մասին:

Պսակադրությունը խորհրդանշում է ամուսնությունը հոգևորականի կողմից օրհնելու և եկեղեցում օրինականացնելու կարգը: Եկեղեցում պսակի օրհնության մասին կանոնը շար կարելու է այն առումով, որ ազգագրական գրականության մեջ որոշ շրջաններում հաճախ է հանդիպում «թոնրի պսակի» արարողությունը: Այդուհանդերձ այս ծեսը գրեթե ողջ հայերը ամրագրել են եկեղեցում, վկայում են վերը նշված բոլոր գրավոր աղբյուրները: Պսակի մասին Բմասպասերի ԺԵ կանոնում սահմանվել է հետևյալը. «Պարս և պարշաճ է գայնոսիկ, որք ի պսակելն հանդերձեալ են, քահանային յեկեղեցին տանել, և ի վերայ նոցա կարարել զկարգ և զկանոն ըստ արինաց քրիստոնեից, և անդ ի սրբության տեղիսն պսակել. զի ի միում տեղուց վայել է լինել պսակին և որ ընդունի զպսակն: Իսկ եթե որ ոչ այսպես արաս-

26 Անդ, նշվ. աշխ., էջ 124-125:

27 Գամբիրում խաչեղբայրը՝ **մոմճի, ընթապապ** տերմինների գործածությունը որոշ շփոթությունների տեղիք էր քվել: Օրինակ Նախի վերին հովրի հայ գյուղերում հարսին որպես պաշտպան նշանակելու հին սովորության վերանայու հետևանքով, մոմճին շփոթվում էր փեսամանրիկի հետ: Ինչպես հայերի է Արեւելյան Նայասպանի գավառներում կնքահայրը կոչվել է քավոր, իսկ մականբաշին՝ խաչեղբայր կամ թագվորցի, իսկ Արեւմտյան Նայասպանում՝ մոմճի ազապբաշի, իգիթբաշի: Պետք է ենթադրել, որ տերմինների այս տարբերությունը հետևանք է հոգևոր կուրությունի փոխազդեցությունների: Օրինակ՝ քրիստոնեական եկեղեցու ազդեցության տակ իգիթբաշին, մականբաշին կամ ազապբաշին, որ նախկինում հարսին ու փեսային առեսնգումից պաշտպանելու դերն ուներ, դարձել է խաչեղբայր կամ մոմճի: Մականբաշին, որ հարսի ու փեսայի փոխարեն պսակի ժամանակ խաչ էր բռնում, Գամբիրի որոշ վայրերում խաչի փոխարեն մոմ էր բռնում, որից և առաջացել է խաչեղբայր, մոմճի տերմինները: Թագվորցի տերմինը փոխաբերական իմաստ ունի: Ըստ Աստվածաշնչի՝ եթե փեսան թագավոր է, ապա փեսայի ընկեր պաշտպան ամուրի երիտասարդը՝ թագվորցի (թագավորացու է), այսինքն՝ նա էլ մի օր թագավոր է լինելու: (Վ. Ս. Թեմուրճյան, նշվ. աշխ., էջ 119):

ցել, այլ որպես և իցել իւրով կամակարարութեամբ և ծուլութեամբ անարգեսցել զարեւս և զկարգ ամուսնութեանն՝ քահանայն լուծցի յիւրմէ պարտոյն և զպսակաւորսն վերսրին պարպ է պսակել ըստ արինաց քրիստոնէից. . . »²⁸:

Կոնդակի ԺԲ հոդվածում խոսվում է հարսանեկան խրախճանքների ժամանակ րեդի ունեցող ճոխ ծախսերի մասին, որը պարբիարքը անրեդի է համարում և խորհուրդ է րալիս խուսափել և սահմանափակվել համեստ չափավորությամբ:

ԺԳ հոդվածը վերաբերում է եկեղեցում պսակը չօրհնելուն այն դեպքում, երբ ամուսնացողները հանցագործ կամ վրանգավոր մարդիկ են, քանի որ եկեղեցին սրբավայր է և ամբարիշտներին իր դռներից ներս չի ընդունում:

Վերջին ԺԴ հոդվածով պարբիարքը ամփոփում է իր խոսքը և հակիրճ բացատրություններ րալիս վերը նշված դրույթների կապակցությամբ:

Այսպիսով, այս փոքրիկ հոդվածն ուներ երկու նպատակ.

1. Վեր հանել Կ. Պոլսի պարբիարք Մաղաքիա արք. Օրմանյանի կոնդակը ամուսնական ծեսի փուլերի վերաբերյալ, որն իր բնույթով հոգևոր և բարոյախրապական մի կանոնագիր է: Թե ինչքանով է այն ընդունվել և կիրառվել եկեղեցու և ժողովրդի կողմից, դա այլ խնդիր է:

2. Փորձել «Արևելք» թերթի խումացած էջերից դուրս հանել և մոռացության վրանգից փրկելով՝ վերահրապարակել կոնդակն ամբողջությամբ:

ՄԱՐԻԱՄ ԱՊՐԵՍՅԱՆ

ՊՍԱԿԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ²⁹

Պարբիարքական կոնդակ

Մաղաքիա ծառայ Յիսուսի Քրիստոսի, Ողորմութեամբն Աստուծոյ Արքեպիսկոպոս Կոստանդնուպոլսոյ եւ պատրիարք Հայոց Թուրքիոյ:

Սիրեցեալ գործակցաց մերոց ի Քրիստոս բարեխրատ Քարողչաց, բարեկարգ Աւագերիցանց, եւ բարեշնորհ Քահանայից, եւ Սիրեցեալ որդւոց մերոց բարեջան Թաղական խորհրդոց եւ բովանդակ բարեսէր Ժողովրդեան Մեծի վիճակիս Կոստանդնուպոլսոյ, ողջոյն եւ օրհնութիւն տիրաւանդ:

Մարդկային կենաց եւ ընկերական կենցաղին առաջին տարրը ճանչցուած է անհատական ամուսնական կապը, որ հաւասարապէս առարկայ եղած էր եւ է ամեն օրինաց եւ կարգադրութեանց, որովհետեւ իբրեւ անհրաժեշտ պայման կը մտնէ ամեն օրինական կազմակերպութեանց մէջ: Ամուսնութիւնը բնական գործողութեանց կարգին մէջ՝ բնական օրինաց ազդեցութիւնը կրելէ ետքը, կրօնական օրինաց ենթարկուեցաւ իբր բարոյական մի գործ, եւ քաղաքական օրինաց պարունակէն ալ դուրս չմնաց իբր ընկերական կենաց կազմական միջոց, իսկ Քրիստոնէական երկնապարզեւ Ս. Կրօնիս մէջ նուիր-

28 «Յովհաննու Իմաստասիրի Ամենեայ մատենագրութիւնք», Վենետիկ, 1833, էջ 10:

29 «Արևելք», Կ. Պոլիս, 1901թ., թիւ 4767, 4768, ԺԸ րարի:

րական կերպարան զգեցաւ եւ խորհրդական բարձրութեամբ պատուուեցաւ, որպէս զի հաւատացեալ ժողովրդեան սրբութեան եւ ուղղութեան եւ բարօրութեան առաջնորդէ հզօրեղապէս: Այս նպատակով Ս. Եկեղեցին Քրիստոսի, հոգեւոր կարգերով եւ կանոններով, պայմաններով եւ ծէսերով պատեց զայն անդատին ի սկզբանէ, իւր արթուն եւ բարեսէր հսկողութեան ներքեւ առաւ անոր ամեն մասերը, բարեպաշտական եւ նուիրական պարագայներով զարդարեց ու զօրացուց անոր կատարումը:

Նաեւ մերս Ուղղափառ եւ Առաքելական Ս. Եկեղեցի, հաւատարիմ աւանդապաշտ նախնի կարգաց եւ կանոնաց, իւր ծիսական տրամադրութեանց մէջ այնպիսի շքեղ եւ նշանաւոր արարողութիւններ հաստատեց ամուսնական օրհնութեան եւ խորհրդական պսակադրութեան համար, որ շատ ստորին չեն մնար անոնցմէ՝ որովք նոյն ինքն Եկեղեցւոյ պաշտօնեայք կը կոչուին եւ կը ձեռնադրուին: Մաշտոցին հնաւանդ կանոնները կը ցուցնեն թէ Պսակի օրհնութիւնը պիտի կատարուի ի մէջ Եկեղեցւոյ, առաջի Սրբոյ Խորանին եւ ի ժամ մատուցման Ս. Պատարագի, որ այդ առթիւ յատուկ սրբաբանութիւններ եւ երգեր եւ ընթերցուածներ կ'ունենայ, փոխանակ աւուր տօնական պատշաճին: Այդ արարողութիւններ եւ պայմաններ տեղ տեղ ամբողջաբար եւ շատ տեղ գրեթէ ամբողջաբար կը կատարուին մինչեւ ցայսօր, այլ ուր առաւել տարբերութիւններ մոծուեր են, այն ալ Մայրաքաղաքս է, որ թէպէտ ի բազումս զարգացման եւ բարեկարգութեան առաւելութիւններով կը պարծենայ, այլ ի մասինս քրիստոնէական նշանաւոր զանցառութիւններու, չըսեմք զեղծումներու, մեղադրանաց ներքեւ ինկած կը գտնուի:

Ժամանակի եւ տեղւոյ դժուարութիւնք ներելի նկատել տուած են երբեմն, որ Եկեղեցւոյ Խորհուրդ մը պատահաբար հնար լինի եկեղեցիէ դուրս ալ պաշտուիլ. այլ ինչ որ եկեղեցական օրինաց հակառակ՝ յոյժ բացառիկ եւ անհրաժեշտ պարագայից առջեւ կրնար արդարանալ, Պսակի խորհրդոյն մէջ հետզհետէ առաւել ընդարձակութիւն սկսած է ստանալ, եւ դիւրութեան եւ հանգստեան փաստը՝ օրինաւորութեան եւ պատշաճողութեան վրայ նախադասուելով, գրեթէ սովորութիւն դարձած է որ Մայրաքաղաքիս մէջ ընդհանուր կերպով տուներու մէջ խորհրդական Ս. Պսակն օրհնուի, եւ խրախճանաց սրահներու մէջ ծիսական սպասք երեւնան եւ հոգեւորական պաշտամունք կատարուին, եւ արտաքին ու աշխարհական հանդիսութեանց կերպարան տրուի սոյն նուիրական արարողութեան: Եւ իբրեւ թէ կատարեալ ազատութիւն տրուած լինէր այդ մասին, մինչեւ իսկ ընդհանուր սրահներ եւ պանդոկներու մէջ զուարճութեանց դահլիճներ Պսակի արարողութեան եւ ամուսնական օրհնութեան համար յատկապէս վարձուիլ եւ գործածուիլ սկսան:

Սակայն եկեղեցական իշխանութիւնը երբէք չլուեց այդ զանցառութեան դէմ եւ Պսակի Կոնդակը միշտ յիշեցուց, թէ. «Շատ աղէկ կըլլայ, եթէ պսակը Ս. Եկեղեցւոյ մէջ կատարուի եւ ոչ տուները, գիտնալով որ միայն հարկե-

ցուցիչ պատճառաւ վերջին ժամանակներս տուները Պսակ կատարելու սովորութիւնը մտած է միայն ի Կոստանդնուպոլիս, եւ դեռ գաւառները միշտ եկեղեցւոյ մէջ կը կատարեն այս սուրբ խորհուրդը, ինչպէս որ մեր երանեալ Նախնիք սահմանած են»։ Եւ 1875 տարւոյ ապրիլ 25-ին Ուսուցիչ Ժողովով հաստատուած հարսանեկան կանոնադիրը՝ ԺԳ-ը յօդուածով բացարձակապէս հրամայեց, թէ «Պսակը ըստ կանոնաց Եկեղեցւոյ պիտի կատարուի միշտ յեկեղեցւոյ», եւ ԺԵ-ը յօդուածով վեց ամիսէն մինչեւ մէկ տարի քահանայապետութենէ զրկուած հաստատեց առանց պատրիարքարանի յատուկ եւ գրաւոր հրամանին՝ տան մէջ պսակ կատարող եկեղեցականին դէմ։

Արդ տեսնելով եւ նկատի առնելով այդ նախընթացները, տեսնելով եւ նկատի առնելով եկեղեցական կանոնաց եւ ծիսակատարութեանց խիստ պահանջները, նկատի առնելով պատահական զեղծմանց ընդարձակուիլը, նկատի առնելով խիթալի դժուարութեանց վերցուիլը եւ առձեռն դիւրութեանց առատանալը, եւ առաջի աչաց ունենալով Պատ. կրօնական Ժողովոյ իր յուլիս 3-ի նստին մէջ այդ հիմամբ տուած որոշումը, կը հրամայեմք եւ կը պատուիրեմք, որ այսուհետեւ Ս. Եկեղեցիներէ դուրս որ եւ է ընտանեկան կամ մասնաւոր կամ հրապարակային յարկի մէջ չկատարուի եւ չօրհնուի Ս. Պսակի խորհուրդն ու արարողութիւնը, այլ միշտ եւ յամենայնի պահուի եւ պահպանուի ծիսական կարգաւորութիւնը, եւ այդ նուիրական գործողութիւնը Եկեղեցւոյ մէջ կատարուի, որպէսզի թէ՛ նորապսակներն, թէ՛ իրենց պարագայք եւ թէ՛ հաւատացեալ ժողովուրդը զգալի կերպով հասկնան եւ թափանցեն խորհրդոյն եւ գործոյն հոգեւոր նշանակութեան, օգտուին Եկեղեցւոյ հաստատած շնորհաբաշխ արարողութիւններէն, եւ ազդուին ինչպէս որ պէտք է մեր Ս. Կրօնին եւ Ս. Աւետարանին աւանդած պատգամներէն։

Այս առթիւ կ'ուզէինք եւ կը փափագէինք ամուսնական կենաց սրբութեան, մեծութեան, օգտակարութեան, ընդհանուր հարկին, մերձաւորութեան աստիճաններուն, եւ անլուծանելիութեան պայմանին, եւ այլ կանոնական պահանջներուն վրայ կարեւոր բացատրութիւններ տալ. այլ որովհետեւ այդ ամենը կրնայ շատ հեռուն մեզ տանիլ եւ շատ ընդարձակ գրողածոց դուռ բանալ, հետեւաբար այս անգամուան համար լոկ նշանադրութեան եւ պսակադրութեան մասին քանի մը կարեւոր եւ օգտակար կարգադրութիւններ յիշատակեմք եւ անոնց գործադրութեան մասին լուսաբանութիւններ յաւելումք։

Ա. Ծխատէր քահանայից արգիլեալ է որ եւ է առթիւ կամ պատճառով նշան օրհնել կամ Պահպանեալով հաստատել երկուց կողմանց մէջ հաստատուած խօսքկապը, որ պիտակաբար նշանադրութիւն կը կոչուի։ Բուն նշանադրութիւնը այն է՝ որ օրինական քննութիւններով եւ վկայութիւններով պատրիարքարանի մէջ կը հաստատուի եւ կ'արձանագրուի եւ կ'օրհնուի, եւ օրինական վաւերականութիւն եւ զօրութիւն կ'ունենայ։ Ընտանեկան շրջանակի մէջ կատարուած խօսքկապը երբեք օրինական ոյժ չունի, եւ քահ

Հանայից կ' արգելուի պաշտօնական եւ կրօնական ձեւ տալ այդ անպաշտօն եւ ընտանեկան գործողութեան, որպէս զի որ եւ է թիւրիմացութեան կամ չփոթութեան տեղի չտրուի:

Բ. Յատկապէս կը պատուիրեմք երկու կողմերու ծնողաց եւ խնամակալաց, որպէս զի լոկ ընտանեկան խօսքկապով հաւարտեն փոփոխ խոստումը, այլ ամեն բան իմանալէն եւ պարզելէն յետոյ՝ փութան կատարել պաշտօնական նշանադրութիւնը պատրիարքարանի մէջ, առանց յետաձգելոյ զայն մինչեւ պսակադրութեան օրը: Այս կերպով թէ՛ փոխադարձ ապահովութիւն եւ վստահութիւն կը գոյանայ, թէ՛ գործողութիւնը օրինական ոյժ կը ստանայ, եւ թէ իրենք առաջի աշխարհի խնամութեան պայմաններուն վայելումը կ' ունենան:

Գ. Նմանապէս կը յորդորեմք նշանադրութենէ պսակադրութեան միջոցը տարապայման չերկարել, որ թէ նշանելոց համար ծանր է եւ տաղտկալի, եւ թէ երկու կողմերուն մէջ տարապարտ զրոյցներու եւ միջադէպներու առիթ, եւ թէ՛ ի գուր եւ ընդունայն ծախքերու դուռ: Թէպէտ քանի մը ամիսէ պսակելը գովելի է, այլ առ առաւելն վեցամսեայ միջոցը բաւական սեպուելու է: Ծխատէրներ պարտաւոր են այդ մասին հսկել եւ տարապարտ յապաղմանց առաջն առնուլ եւ ի հարկին պատրիարքարանի տեղեկութիւն տալ, որպէս զի անտեղութեանց առիթ չտրուի:

Դ. Նշանադրութեան ինչպէս նաեւ հրամանի առթիւ պատրիարքարանի եւ ծխատէրներու վճարուելիք իրաւունքներու համար պատրիարքարանը յատուկ ցուցակ մը կազմած է, եւ ըստ այնմ պէտք է հատուցանել: Այս մասին հարկ կը սեպենք ազդարարել թէ պատրիարքարանը կը ղեկավարանայ յոյժ՝ այդ իրաւունքներուն վրայ զիջողութիւններ ընել, ցօրհափ կը տեսնէ որ միայն պատրիարքարանի իրաւունքներուն վրայ խժեծանքներ կը յերկրորդին, իսկ շատ մը աւելորդ եւ շռայլ եւ նոյն իսկ անտեղի ծախքեր անխորհրդաբար կը կատարուին: Կը յիշեցնենք նաեւ թէ այսուհետեւ կամաւոր չէ երկու կողմերուն իրենց ուզած աստիճանով կամ թէ հարկաւ իրարու հաւասար աստիճանով վճարել, այլ իւրաքանչիւր կողման կարողութեան աստիճաններուն համեմատութեամբ պիտի առնուին նաեւ Նշանի եւ Հրամանի բոլոր տուրքերը: Ասոնց ամենուն ցուցակը ի տես դրուած է պատրիարքարանի դիւանատան մէջ:

Ե. Յատկապէս կը յանձնարարեմք ծխատէր քահանայից որ յիշեցնեն, եւ սիրայորդոր կ' ազդարարեմք փեսայացուաց եւ հարսնացուաց, որ յիշեն թէ ամուսնութիւնը, զոր պիտի կատարեն, արտաքին հաճոյական կամ շահադիտական գործողութիւն մը չէ, այլ կենաց ասպարէզին մէջ բարոյական ճգնաց եւ պայքարի գործ մի է որ իրենցմէ կը պահանջէ նոյնչափ մտաց կորով որչափ սրտի գորով, եւ որուն ապագայ յաջողութեան համար պէտք ունին Աստուածային շնորհաց եւ Նախախնամութեան պարգեւաց: Այդ նպատակով է հաստատուած խորհուրդը, այդ նպատակին կը ծառա-

յեն պաշտամունք եւ արարողութիւնք, իրենք ալ այդ հոգւով եւ զգացմամբ պէտք է պատրաստուին, եւ պսակադրութեան նախընթաց եօթնեկին մէջ Ապաշխարութեան եւ Հաղորդութեան խորհուրդներով զօրանան, եւ որ-չափ ժամանակին եւ գործերնին կը ներէ, բարեպաշտական եւ բարեգործական պարտքերնին լուցնեն, աղօթք ընեն եւ ողորմութիւն տան, եւ մանաւանդ իրենց ուրախութեան առթիւ կարօտեալները եւ խեղճերը ուրախացնելու պարտքը՝ ճանչնան իբր նուիրական պայման եւ իբր ամբողջացուցիչ մաս մը իրենց կատարելիք մեծ գործողութեան:

Զ. Պսակի օրհնութեան համար սովորական օրն եւ ժամն է այն եօթնեակներուն երկուշաբթի առտուն կամ ցերեկը, որոց կիրակիին առջեւ օրացոյցը հարսանիք բառը կը նշանակէ, այսինքն է պահոց եւ տէրունեաց չհանդիպող երկուշաբթիներ: Նոյն եօթնեակներուն երեքշաբթին եւ հինգշաբթին եւ շաբաթ օրն ալ ներեալ է պսակ օրհնել, բայց լաւ է յառաջագոյն պատրիարքարանի տեղեկութիւն տալ եւ պատճառը իմացնել: Ասոնցմէ դուրս արգիլեալ օրեր պսակ օրհնել ներեալ չէ երբեք:

Է. Պսակի օրհնութեան տեղն է ըստ կանոնաց եւ պիտի ըլլայ այսուհետեւ Եկեղեցին միայն, սովորաբար փեսային թաղին եկեղեցին, եւ երբեմն հարսնացունին թաղին եկեղեցին կամ թէ ուրիշ եկեղեցի մը, եթէ այդպէս աւելի յարմար կամ աւելի դիւրին երեւի: Եկեղեցւոյ մէջ պիտի կատարուի միայն Պսակի օրհնութեան կարգը: Նշանի օրհնութիւնը պատրիարքարանի մէջ կը կատարուի ժամանակին՝ աւելի կամ նուազ հանդիսութեամբ եւ նշանին վրայ օրհնութիւնը կրկնելու պէտք չկայ: Իսկ հալաւի օրհնութիւնը բարեպաշտական մաս մըն է, եւ իւրաքանչիւր կողման ծխատէրը պարզօրէն կը կատարէ զայն իւրաքանչիւրին տան մէջ կանուխ եւ կամ առջի օրէն, իսկապէս փեսայացունին եւ հարսնացունին հարսանեկան զգեստը օրհնելով՝ հազնելէն առաջ, եւ ոչ թէ լոկ գլխանոց մը կամ թէ կեղծ ծաղկի կտոր մը, որ բարեպաշտական նշանակութենէ աւելի ծաղրելի հանգամանք մը կը զգենու: Հալաւի օրհնութիւնը եկեղեցւոյ մէջ կատարուելիք արարողութիւնն է:

Ը. Փեսայացունին տունէն քանի մը անձեր իբր պատուիրակ հարսնացունին տունը կ'երթան եւ հարսնացունին տունէն դալիքներուն հետ հարսնառի խումբը կը կազմեն եւ հարսը եկեղեցի կը տանին որոշեալ ժամուն, ուր պահ մը առաջ կը հասնի եւ փեսայն փեսաւէր խմբին հետ: Եկեղեցւոյ ատենը կը սկսի արարողութիւնը «Նայեաց ի մեզ» շարականէն սկսելով: Խառն ժողովոյ 1875-ի կանոնագիրը ձեռնտուութիւնը խրատներու վերջը կը թողու, իբր զի առաւել յարմար է որ հաւանութիւնները եւ խոստումները առնելէ ետքը խորհրդական ձեռնտուութիւնը կատարուի եւ ամուսնական կապը հաստատուի, եւ այդպէս ալ տեսնուած կայ հին ձեռագիրներու մէջ, մինչ Մաշտոցներու սովորական տպագրութիւնները խրատը ձեռնտուութենէն ետքը կը դնեն, բայց որովհետեւ այդ վերջին եւ նուիրական պարագային՝ «ո՛չ» պատասխանելու հնարաւորութիւնը եւ ազատութիւնը վերցուած չէ

եւ օրինական ալ տեսնուած է, ուստի նախադասելի կը գտնեմք եւ կը յանձնարարեմք ձեռնտուութիւնը խրատէն եւ խոստումներէն յետոյ կատարել եւ անմիջապէս յարել ժամամուտը: Իսկ նարօտի մասին ի դէպ է պահել տեղական սովորութիւնը:

Թ. Թաղվերացի մասը ըստ հին սովորութեան տան մէջ պիտի կատարուէր եւ այն ալ երեք օր ետքը, բայց քանի որ այլ եւս այդ երեքօրեայ յապաղումը չկայ եւ անմիջապէս թաղ վերացնելու սովորութիւնը հարկաւոր դատուած է, ի դէպ է եկեղեցւոյն մէջ թաղվերացն ալ աւարտել իր ամէն մասերով: Այլ եթէ թաղվերացը յապաղելու փափագող գտնուի՝ արգելեալ չէ զայն առանձին կատարել տան մէջ առանց հանդիսութեան:

Ժ. Թէպէտ Մաշտոցը չյիշէր, այլ հաստատուն եւ հնաւանդ սովորութիւնը ընդունած է Պսակի օրհնութեան ատեն կնքահօր մը ներկայութիւնը, որ Ս. Խաչը կը բռնէ փեսային եւ հարսին գլխուն վրայ ձեռնտուութեան արարողութենէն ետքը: Քանի որ կնիքի խնդիր չկայ, բուն կնքահայր ալ չկայ, ուստի աւելի լաւ խաչեղբայր կը կոչուի այդ անձը շատ գաւառներու մէջ: Իր դերն է իբր վկայ եւ խնամակալ կանգնիլ նորապսակներուն հանդէպ, հետեւաբար անյարմար է եւ ներելի չէ մատաղ մանուկներու կամ տհաս պատանիներու կամ անփորձ երիտասարդներու յանձնել այդ դերը եւ անոնց ձեռքը տալ վկայութեան խաչը, եւ կը հրամայեմք որ նորապսակներուն գլուխը խաչ բռնողներ միշտ եւ առանց բացառութեան չափահաս եւ փորձառու անձեր լինին:

ԺԱ. Պսակի օրհնութեան եկեղեցւոյ մէջ կատարուելը՝ որ պարզապէս խորհրդոյն պատուոյն եւ եկեղեցական արարողութեան պահանջին հետեւանքն է, երբէք նոր ծախուց կամ ծանրութեանց առիթ պէտք չէ լինի: Հարսին եւ փեսային տեղէ տեղ երթալը բնական մի պայման է, եւ եկեղեցի հանդիպելին նոր բեռ չաւելցնել: Եկեղեցւոյ համար եւ եկեղեցւոյ պաշտօնէից համար մասնաւոր նուէրներ արդէն իսկ կը տրուին, եւ եկեղեցի դաւով չպիտի աւելնան: Եթէ եկեղեցւոյ մէջ արտասովոր լուսավառութիւն եւ զարդարանք կատարել ուղղուի, ծախք մըն է, որ ընօղին կամքէն կախուած է, բայց եկեղեցին յատուկ ծախք չպիտի պահանջէ եւ յատուկ հանդերձանքի պարտաւոր չէ: Թող որ եկեղեցական արարողութեան տան մէջ կատարուելը՝ տեսակ տեսակ ծախուց եւ ծանրութեանց պատճառ կը լինէր, որոցմէ այս կերպով ազատ պիտի մնան հարսանեաց տուներ: Պսակի եկողներ եկեղեցի գալիք լինելով պարտաւոր պիտի չըլլան երբէք հանդիսասրահներու յատուկ ծանր զգեստներ եւ զարդեր գործածել, այլ սովորական վայելուչ տարազները բաւական պիտի սեպուին: Յաւարտ արարողութեան, շնորհաւորական ողջոյնները կը կատարուին եկեղեցւոյ դրան մօտ, ինչպէս ուրիշ առիթներու մէջ տեղի կ'ունենայ, եւ միայն մտերիմներ եւ յատկապէս հրաւիրեալները կրնան փեսային տունը երթալ ընտանեկան համեստ ուրախութեան մասնակցելու:

ԺԲ. Հարսանեկան ծախքերը ի հնուամն սովորութիւն եղած էր առատութեամբ ընել, բայց այն ատեն կարծես թէ սովորութիւն էր առօրեայ կեանքը շատ չափաւորութեամբ անցընել, եւ կենաց մէջ անգամ մը չափազանցելը ներեալ կ'երեւէր: Բայց աշխարհի կենցաղը, ապրելու սովորոյթները, մարդկային ճաշակը, հանգստեան պահանջները, հաճոյից տեսակները՝ հետզհետէ փոփոխութեան կ'ենթարկուին, եւ նոր ժամանակներու մէջ կարծես թէ սովորական առաւելութիւնները շատնալով՝ պատահական չափազանցութիւնները կը խափանուին: Այդ տեսութեամբ կը հրաւիրենք բոլոր մեր սիրեցեալ ժողովուրդը հրաժարիլ Պսակի առթիւ ամեն չափազանց ծախքերէ եւ սիրել գեղեցիկ չափաւորութիւնը, որով ոչ միայն խնայողական նշանաւոր օգուտ պիտի ստանան, այլեւ պատահական անհամութիւններէ եւ անհանգստութիւններէ զերծ պիտի մնան, որով շատ անգամ հարսանեաց մէկ օրուան ծախքով կեանքերնուն մի մասը պարտքի տակ կը բեռնաւորեն, եւ զանազան ճախող անակնկալներու դիմաց կը գտնուին: Հետեւաբար, ընդհանուր կերպով կը յանձնարարեմք հարսանեկան հանդէսներէն վերցնել եւ յապաւել ամեն տեսակ աւելորդ եւ շռայլ ծախքեր, խրախճաններ, հացկերոյթներ, երեկոյթներ եւ նմաններ, եւ գեղեցիկ պարզութեան օրինակը տալ իւրաքանչիւր իր աստիճանին համեմատ: Արդէն աչքի առաջ կը տեսնենք թէ ինչպէս ամեն կրթեալ եւ զարգացեալ ժողովուրդներ իրենց ամուսնութիւնները սկսած են կատարել ամենայն պարզութեամբ, եւ միշտ իրենց կրօնական տաճարներուն մէջ, եւ ոչ երբէք անոնցմէ դուրս: Եւ մենք ալ որ ամեն Ս. Խորհուրդները Եկեղեցւոյ մէջ կատարուելու գեղեցիկ նախանձախնդրութիւնը ունինք, մենք մեզի պէտք չէ ներեմք Խորհուրդներէն մէկին համար բացառութիւն ընել եւ Եկեղեցիէ դուրս կատարել:

ԺԳ. Պսակները եկեղեցւոյ մէջ օրհնելու հրամանը բացարձակ եւ ընդհանուր լինելով, երբէք այս ու այն պատճառանքներ չպիտի զօրեն բացառիկ արտօնութիւն ստանալ: Պսակներուն եկեղեցւոյ մէջ կատարուիլը իրենց հրապարակային եւ օրինական պայմանին ալ հաստատութիւնը լինելով, միայն այն ատեն հնար է բացառիկ կերպով եւ անշուք եղանակով տան մէջ պսակ օրհնելու հրամանը ստանալ, երբոր պսակուելիքներ փորձանաւոր անձեր են: Արդէն մէկ կողմէ Եկեղեցին չսիրեր այնպիսիներուն ընթացքը պատուել սրբավայրին շնորհիւ եւ միւս կողմէ իրենք ալ պատճառներ կ'ուենան իրենց դրօժը հասարակութեան աչքէն ծածկել:

ԺԴ. Պսակի եւ ամուսնութեան վրայ խօսած ատեննիս, շատ ու շատ կէտեր կային տակաւին՝ զորս կրնայինք յառաջ բերել. եւ նոյն իսկ արարողական մասէն ալ կէտեր կան՝ որոց վրայ հնար էր դեռ խօսիլ, այլ Մենք ասոնց ամենքը զանց կ'ընեմք այս անգամ, նոր եւ պատեհագոյն առթի թողլով. եւ ինչ որ գլխաւորաբար ներկայ պաշտօնական կոնդակովս կը յանձնարարեմք եւ կը հրամայեմք՝ Պսակներն եկեղեցւոյ մէջ օրհնելու կէտն է, ուստի իրական օգտակարութիւններ կ'սպասեմք, տալով պսակին եւ ամուսնութեան եւ

ընտանեկան կենաց այն կարեւոր եւ օգտակար եւ ցանկալի բարձրութիւնը, ուսկից կարծես թէ կ' իյնայ, մի կողմանէ կորսնցնելով իւր նուիրական եւ խորհրդական կերպարանը, եւ առան[ձ]ին կատարուող աշխարհական դործողութեան մը ձեւն ստանալով, եւ միւս կողմէ կը փափագիմք զեղջել եւ խափանել այն ումպէտ եւ ձանձրալի ծախքերը, որոց երեսէն շատ անգամ ամուսնական կենաց կազմութիւնը կը յետաձգուի եւ կ' արդիւոյի:

Ընտանեկան կենաքը մարդկային ընկերութեան ալ կեանքն է աշխարհի կեանքին հիմն է, սրտի կեանքին աղբիւրն է. ամուսնութիւնը ընկերական կեանքին ալ անհրաժեշտ պայմանն է. մարդկային սեռին պահպանութիւնն է: Չպիտի վարանիմք մինչեւ իսկ զայն իբր օրինական պարտաւորութիւն մը հռչակել, միակ բացառութիւն ընդունելով վանական կենաց նուիրուելու պայմանը: Ո՞չ ապաքէն շատեր ժամանակին չկատարելով զայն՝ տարածամ ձախող ձեռնարկութեանց կը պարտաւորուին. եւ ուրիշներ ալ իրենց հասունացեալ հասակը կենցաղական միխթարութենէ զրկեալ կը գտնեն: Աներկբայ է որ ամուսնական կեանքն ալ ունի իր ծանրութիւնները, ընտանեաց հոգը, աշխատութեանց բեռը, որդւոց խնամքը, պատահական անհամաձայնութիւններ եւ նմաններ, սակայն օրէնքը բացառութիւններէ չկազմուիր, մանաւանդ թէ բացառութիւններով կը զօրանայ: Ամուսնական կենաց պակասութիւնը մարդուն ստեղծագործութեան ժամանակէն հռչակուեցաւ թէ «ոչ է բարւոք», եւ ամուսնութիւնը այն ժամանակէն մինչեւ ցայսօր իբրեւ անյեղլի օրէնք տիրապետեց եւ դործադրուեցաւ, եւ այս է զոր եւ Մեք կ' ուզեմք քաջալերել եւ յանձնարարել:

Տա՛յր Աստուած որ ընտանեկան կենաց նահապետական քաղցրութիւնը, եւ ամուսնական կենաց քրիստոնէական սրբութիւնը, եւ տնական կազմութեան բարոյական միխթարութիւնը՝ վայելեն միշտ եւ անխափան երկնային օրհնութեանց բիւրաբեղուն բարիքը, եւ ինչ որ օրհնեալ տան մը բարիքն է, նոյնը ընդհանրանայ բոլոր տուներու վրայ, եւ բովանդակ օրհնեալ Ազգիս բարօրութիւնը կազմէ ողորմութեամբ Աստուծոյ Հօր եւ շնորհօք Փրկչին Միածնի եւ պարգեւօք Միխթարիչ Ս. Հոգւոյն, ամէն:

Տուեալ ի պատրիարքարանիս Կոստանդնուպոլսոյ յամին 1901, ի սկիզբն ամսեանն սեպտեմբերի, ընդ 210 թուահամարու կոնդակաց:

ՊԱՏՐԻԱՐԷ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ
ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ